

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆՍՈՒՄ

Ջեկուցող՝ Արմեն Հարությունյան

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի

գարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետ

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո բոլոր արտադրական ենթակառուցվածքներն ամբողջ երկրում, այդ թվում՝ մայրաքաղաքում, օբյեկտիվորեն բախվեցին տվյալ ժամանակաշրջանի առանձնահատկություններով պայմանավորված հիմնախնդիրների: Նույն խնդիրները ծառայեցին նաև Երևանի քաղաքային ենթակառուցվածքների անբաժանելի և կարևորագույն մաս հանդիսացող արտաքին լուսավորության համակարգի առջև: Անկախության տարիներից ի վեր՝ մինչև 2000-ական թվականները, այն իր վրա կրում էր խորհրդային տարիների վերջնահատվածի ժառանգական և պատերազմող երկրի խաթարված տնտեսության առանձնահատուկ դաջվածքը:




Միաժամանակ նշենք, որ այդ համակարգը, անգամ ամբողջապես շահագործելու պարագայում, չէր կարող լինել արդյունավետ, քանի որ իր բնույթով այն այլևս չէր համապատասխանում ժամանակի պահանջներին: Դրան ավելացնենք նաև կապիտալ ներդրումների պակասը, ընթացիկ շահագործման և սպասարկման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների սղությունը, արդյունքում՝ այդ ամենը Երևանի արտաքին լուսավորության համակարգը հասցրեցին այնպիսի վտանգավոր շեմի, որի պայմաններում ոչ միայն վտանգված էր բուն համակարգի անխափան աշխատանքը, այլ նաև խնդիրներ էին առաջանում քաղաքային միջավայրի անվտանգության առումով:

Քաղաքային լուսավորության համակարգը 2000 թվականին իրենից ներկայացնում էր 205 կմ երկարությամբ ցանց՝ 6085 լուսատուներով: Լուսատուները, որպես կանոն, սնդիկային և շիկացման էին, որոնք ոչ միայն էներգախնայողություն

չէին ապահովում, այլ նաև վտանգավոր էին կիրառման տեսանկյունից: Այդ ժամանակահատվածում Երևանում փողոցների լուսավորության տևողությունը 5 ժամ էր, որն հավասարապես բաշխված էր քաղաքի տարածքում, իսկ Երևան մուտք գործող հիմնական մայրուղիներում և բազմաբնակարան շենքերի բակային հատվածներում այն իսպառ բացակայում էր: Այսպիսով ոլորտը կարիք ուներ հրատապ միջոցների ձեռնարկման և 2000-ական թվականներին մայրաքաղաքի արտաքին լուսավորության համակարգում սկսեցին իրականացվել որոշակի առողջացման քայլեր, որոնք, սակայն, համալիր միջոցառումներ չէին, իսկ լուծումները հիմնականում թելադրվում էին ստեղծված իրավիճակով:

2010-2014 թվականներին քաղաքային իշխանությունների կողմից կայուն զարգացման սկզբնական փուլի համար նպատակային առաջնահերթ թիրախ ընտրվեց լուսավորության ծածկույթի ավելացման ապահովումը: Այդ ժամանակահատվածում քաղաքային լուսավորության ցանցի երկարությունն ավելացավ 204 կմ-ով՝ 1174 կմ-ից հասնելով 1414-ի, իսկ լուսատուները՝ 48 222-ից դարձան 60 913 հատ: Իրականացված աշխատանքների արդյունքում արդեն այսօր մայրաքաղաքում լուսավորության ծածկույթը հասցվել է մինչև 95%-ի՝ ապահովելով նաև քաղաք մուտք գործող մայրուղիների լուսավորությունը:



Քաղաքի համաչափ զարգացման համատեքստում, նույն հարաբերակցությամբ ապահովվեց նաև Երևանի ծայրամասային շրջանների, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի բակային տարածքների լուսավորությունը:

Մրան գուգահեռ սկսվեց լուսավորությունն ապահովող լուսատուների որակական փոփոխության գործընթացը, և նախկինում օգտագործվող ոչ այնքան անվտանգ սնդիկային ու շիկացման լուսատուներն աստիճանաբար փոխարինվեցին նատրիումային լուսատուներով, որոնք զերծ են վտանգավոր քիմիական տարր պարունակող նյութերից: Այդ աշխատանքները, չնայած իրավիճակային էին, այդուհանդերձ հնարավորություն տվեցին մայրաքաղաքի արտաքին լուսավորության բարդ, անկայուն իրավիճակը հնարավորինս կայունացնել և հարթակ ապահովել ծրագրային և համակարգված բարեփոխումների համար:

Ներկայում Երևանի արտաքին լուսավորությունը՝ ներառյալ որոշ հատվածների գիշերային ժամերի լուսավորությունը, ապահովում է միջին օրական 6 ժամանոց միացման ռեժիմ: Նշված ռեժիմով մայրաքաղաքի փողոցների և բակային տարածքների արտաքին լուսավորությունն իրականացվում է թվով 60913 լուսատուների միջոցով, որոնք տեղադրված են շուրջ 32000 հենասյունների վրա:



Արձանագրենք, որ այսօր դեռևս արտաքին լուսավորության մալուխները գրեթե ամբողջությամբ վերգետնյա են և անցնում են հենասյունների վրայով, որոնց վրայով անցնում են նաև այլ մալուխներ: Մասնավորապես, վերգետնյա մալուխներով ծանրաբեռնված հենասյունները, ինչպես նաև դրանց ոչ արդյունավետ բաշխվածությունը քաղաքի բնակչության և երթևեկի համար ստեղծում է բավականին վտանգավոր իրավիճակ: Գեղագիտական առումով ևս դրանք բացասաբար են ազդում մայրաքաղաքի արտաքին տեսքի վրա: Իր հերթին ներկայում արտաքին լուսավորության ցանցում օգտագործվող նատրիումային լուսատուներն

առաջացնում են սպասարկման և ընթացիկ շահագործման մեծ ծախսեր, ինչն էներգախնայող համակարգերի ներդրման շնորհիվ կարող է կրճատվել 50-70%-ով:



Առկա խնդիրների լուծման նպատակով ներկայում քաղաքային իշխանությունների կողմից մշակվում է նպատակային քայլերի համալիր ծրագիր, որի արդյունքում Երևանը մինչև 2025 թվականը կունենա էներգախնայող և արդյունավետ աշխատող արտաքին լուսավորության միասնական համակարգ:

Հաշվի առնելով ոլորտում ներդրումների անհրաժեշտությունը՝ քաղաքային իշխանությունները փոխշահավետ համագործակցություն են հաստատել միջազգային կազմակերպությունների հետ, որի արդյունքում արդեն իսկ իրականացման փուլ է թևակոխել «Քաղաքային կանաչ լուսավորություն» ծրագիրը: Վերջինիս նպատակն է նպաստել լուսավորման էներգաարդյունավետ սարքերի և տեխնոլոգիաների ներդրմանն ու կիրառմանը՝ այդպիսով նվազեցնելով ջերմոցային գազերի արտանետումները: Այդ նպատակով Երևանի քաղաքապետարանի և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի միջև ստորագրվել է Մտադրությունների մասին հուշագիր, որով նախատեսվում է Երևանի քաղաքային լուսավորության համակարգի էներգետիկ աուդիտի իրականացում, քաղաքային լուսավորության համակարգի արդիականացման հայեցակարգի մշակում, պիլոտային ծրագրի իրականացում:




Պիլոտային ծրագրի շրջանակում նախատեսվում է առկա էներգատար լուսատուները փոխարինել ժամանակակից, էներգաարդյունավետ և ավելի երկարակյաց լուսատուներով, որոնք աշխատում են լուսարձակման բարելավված ցուցանիշներով օժտված լուսադիոդներով: Այս ծրագիրը ներառելու է Երևանից դեպի արևմուտք՝ Հաղթանակի կամրջից մինչև Զվարթնոց օդանավակայանի խաչմերուկ ձգվող 9 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածը: Ծրագիրը համաֆինանսավորվելու է հիմնականում Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի /ԳԷՖ/ կողմից տրամադրվող դրամաշնորհի միջոցով: Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է այլ ֆինանսավորման աղբյուրներից դրամաշնորհային միջոցների ներգրավում:

Երևան քաղաքի արտաքին լուսավորության համակարգում էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ներդրման ֆինանսավորման ապահովման համար կատեղծվի նպատակային վերականգնվող ֆոնդ: Ֆոնդի սկզբնական համալրումն իրականացվելու է էներգաարդյունավետության բարձրացման փորձնական ծրագրի իրականացման արդյունքում գոյացող ֆինանսական խնայողություններից: Ֆոնդում կուտակված միջոցները նպատակային ձևով ուղղվելու են Երևան քաղաքի լուսավորության համակարգում էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ներդրման նախագծերի իրականացմանը:

Միաժամանակ, Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի միջոցներով իրականացվում է Երևան քաղաքի արտաքին լուսավորության համակարգի արդիականացման ծրագրի իրագործելիության ուսումնասիրություն, որը նախատեսում է պիլոտային կարգով կատարել մեր կողմից տրամադրվող մի շարք փորձերի լուսավորության կազմակերպում: Ծրագրի իրագործելիության արդյունքները հայտնի կլինեն արդեն տարեվերջին, որից հետո 2015 թվականին կմեկնարկեն բուն աշխատանքները:

Մշակվող ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է՝

- փոխարինել մայրաքաղաքի բոլոր հենասյունները՝ հաշվի առնելով լուսադիոդային (LED) լուսատուների հնարավորությունները,
- վերանայել հենասյունների բարձրությունը և տեղադրության հեռավորությունը՝ երթևեկի և հետիոտնի համար նախատեսված վայրերում ապահովելով առանց ստվերի լուսավորություն,
- փոխարինել նատրիումային լուսատուները ժամանակակից լուսատուներով,
- իրականացնել գոյություն ունեցող 1420 կմ երկարությամբ մալուխային ցանցի անցկացումը ստորգետնյա խրամուղիներով:




Սույն ծրագիրը նախատեսվում է իրականացնել վարկային և դրամաշնորհային միջոցների ներգրավմամբ:

Գիտակցելով, որ ծրագիրը մեծ կապիտալ ներդրումներ է պահանջում՝ ՎՋԵԲ-ի հետ քննարկվում է ծրագրում դրամաշնորհային բաղադրիչը մեծացնելու հարցում վերջինիս աջակցության հնարավորությունը՝ հաշվի առնելով, որ ներկայումս զարգացող երկրների համար էներգախնայող համակարգերի ներդրման նպատակով գործում են տարբեր դրամաշնորհային ֆոնդեր: Ցանկանում ենք ընդգծել, որ միայն այս սկզբունքի կիրառման դեպքում, այսինքն դրամաշնորհային բաղադրիչի հաշվին է, որ ծրագիրը կարող է դառնալ ծախսաձեռնկալ՝ ապահովելով լուսադիոդային լուսատուների օգտագործումով պայմանավորված էներգախնայողություն:



Գեղագիտական տեսանկյունից փոփոխվում է նաև Երևանի արտաքին լուսավորության կարևոր տարրերից մեկը՝ գեղարվեստական լուսավորությունը: Երևանցուն և հյուրին նորովի է ներկայանում երեկոյան ու գիշերային Երևանը: Ճարտարապետական կոթողները, շենքերը, կառույցները, հուշարձանները, այգիներն ու ջրավազանները ստանում են ժամանակի ոգուն համահունչ լուսային նոր ձևավորում, որն իր հերթին հանդիսանալով քաղաքի երեկոյան միջավայրի գեղագիտական կարևոր բաղադրիչ՝ ծառայում է որպես ներկայանալի «լուսավոր այցեքարտ»: Տոնական օրերին մայրաքաղաքի ողջ տարածքը զարդարվում է շքեղ լուսավորությամբ:

Այսպիսով քաղաքի գեղարվեստական լուսավորությունը նույնպես՝ իր ոճային լուծումների բազմազանությամբ և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ, գտնվում է քաղաքային իշխանության հոգածության ներքո:



Արտաքին լուսավորության համակարգի արդիականացման արդյունքում՝

- Նատրիումային լուսատուների փոխարինումը լուսադիոդային լուսատուներով առկա 250 վատի փոխարեն կծախսի 70-100 վատ էներգիա, որն արդեն իսկ շուրջ 2.5-3 անգամ կնվազեցնի էներգածախսատարությունը: Այդ առումով կկրճատվեն ոչ միայն շահագործման, այլ նաև ընթացիկ սպասարկման ծախսերը՝ հաշվի առնելով, որ լուսադիոդային լուսատուներն ունեն շուրջ 10 տարվա կյանքի միջին տևողություն,
- Մայրաքաղաքի լուսավորության հենասյունների փոխարինումը, հաշվի առնելով լուսադիոդային լուսատուների առանձնահատկությունները, հնարավորություն կտա ունենալ արդյունավետ և անվտանգ լուսավորության համակարգ,
- Արտաքին լուսավորության ավտոմատ կառավարման կենտրոնի ստեղծումը հնարավորություն կտա առցանց ռեժիմով հետևել լուսատուների հոսանքի բեռին, անջատումներին, ինչպես նաև թույլ կտա որոշակի անհրաժեշտ հզորությամբ լուսավորություն ապահովել օրվա ողջ գիշերային ժամանակահատվածում:
- Գոյություն ունեցող մալուխային ցանցի անցկացումը ստորգետնյա խրամուղիներով կբարձրացնի հետիոտնի և երթևեկի անվտանգության աստիճանը, ինչպես նաև կբարելավի քաղաքի արտաքին տեսքը: Իսկ գեղարվեստական լուսավորության շարունակական իրականացումը Երևանում կստեղծի մայրաքաղաքային յուրովի երեկոյան միջավայր:

Այսպիսին են մեր ծրագրերը մայրաքաղաքի արտաքին լուսավորության արդիականացման ուղղությամբ: Հուսով ենք, որ նախատեսված ծրագրերի արդյունավետ իրականացման արդյունքում մինչև 2025 թվականը Երևանի արտաքին լուսավորության համակարգը կդառնա ժամանակի ոգուն և պահանջներին համահունչ էներգախնայող, անվտանգ, արդյունավետ կառավարվող և արտաքին բարելավված տեսքով կայուն համակարգ: